

Քեզ յափտենական սիրով
սիրեցի : Երեմ. ԼԱ. 3
Ինչպէս որ մայր մը իր որդին
կը մխիթարէ, այնպէս ալ ես
ձեզսիրտի մխիթարեմ: Ես. ԿԶ. 13
Քու. Աստուածդ դիմաւոր
ըլլու. պատրաստուէ, ո՛վ իս.
րայէլ. Ամովս. Գ. 12

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵԿՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ես եմ համբան ու. հշմար.
տու.ծիւնը եւ. կեանքը. Յովհ.
ԺԴ. 6
Որդին Մարդոյ եկաւ. որ
պէս զի կորսուածը վնասուէ
ու. փրկէ. Գուկ. ԺԺ. 10
Ես եկայ որ կեանք ունեւ
նամ, եւ. ալ աւելի ունենան:
Յովհ. Ժ. 10

“PANPÈRE” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնեգին տարեկան.—Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Պալքանեան երկիրներ 1 շիլ. ուրիշ երկիրներ 1,50 շիլ
Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

ԹԻԻ 7

Բ. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1926

ԻՆՉՊԷՍ ՈՐ ԱՐԾԱԹԸ ԿԸ ՓՈՐՁՈՒԻ

Ինչու որ դուն բնեցիր մեզ, ով
Աստուած, փորձեցիր մեզ ինչպէս որ
արծաթը կը փորձուի : Սաղմ. 66, 10.

Խնդիր չէ մէ մէնք ի՞նչ կը կրենք, այլ մէ ի՞նչպէս
կը կրենք : Երբոր հոգեւոր դիմադրութեան զօրութենէն
զուրկ ենք, փորձիկ դժբաղդութիւն մը իսկ կարող է մեզ
քործի մէջ ու մոխիրի վրայ նստեցնել. մինչդեռ երբոր
ներքնապէս շիտալ գիրքի մէջ կը գտնուինք, կարող
կ'ըլլանք ծանր խառն մըն ալ անվիատ եւ քաջարար կրել
փրկելն ետեւէն : Խնդիր մեր հաւատքն է : Եթէ մեր
ցաւերուն մէջ՝ Աստուծոյ վրայ մանկական վստահութիւն
ունենալով շնորհքի մէջ չենք գտնուիր, անտանելի կ'ըլ-
լայ կեանքը իր դժուարութիւններով ու խաբէութիւններով :
Առանկ պարագայի մը տակ չենք կրնար գիտնալ մէ նե-
ղութիւնը կամ վիշտը ո՞րակից կուգայ, ի՞նչ կը նշանակէ
եւ ի՞նչպիսի դիրք մը բռնելու. ենք անոր հանդէպ : Ձեռք
կրնար գիտնալ մէ անկէ չընկճուելու. համար ի՞նչ բնելու
ենք : Մութի մէջ կը խալիսափենք, կը տանջուինք երկու-
ղալի անստուգութենէ մը, որ չփարատիր արուեստական
զուարճութիւններով կամ մակերեսային քաջալերական
միջոցներով : Զարմանք չէ որ ասանկ պարագայի մը տակ
հոգին տկարանայ եւ գաղտնի յուսահատութեամբ մը
սպառի :

Ըսել չեմ ուզեր մէ ճիշդ այն պահուն որ մեր կեան-
քը Աստուծոյ սիրուն լոյսին մէջ ղենենք, միշտը գաղտնիք
մ'ըլլալէ կը դարձի այլեւս : Անիկա կը մնայ գաղտնիք
մը, սակայն սուրբ եւ երանելի գաղտնիք մը : Երբ հա-
ւատքի կուգանք՝ այլեւս զմեզ խաւար վիճակի մը աւարը
չենք զգար, վիճակի մը, որ իր անգութ, դիւային խաղը
կը խաղայ խեղճ մարդկութեան հետ, այլ կ'ընդունինք
մէ հաւատարիմ, երկնասուր հոր մը սեփականութիւնն ենք,
որ մեր գլխուն մազերն անգամ համբաւ է : Վիշտը կըր-

նայ մեզ յաճախ արտմնցնել ու վախցնել, սակայն չկրնար
մեզմէ առնել մեր էութեան բուն՝ փառաւոր նպատակա-
կէտը, երբ գիտենք մէ մեր կեանքը պահուած է Քրիս-
տոսով՝ Աստուծոյ մէջ : Վիշտը, զոր պարապ տեղը մեզմէ
հեռացնել կը ջանանք, անէծք մը չէ, այլ օրհնութիւն մը,
զոր վստահութեամբ ընդունելու ենք : Վիշտը՝ շարունակ
մեր կեանքին սպառնացող դաժիճի սուր մը չէ, այլ դաւ-
տիարակութեան գաւազան մը հօր ձեռքին մէջ, հօր մը
որ սիրով կը կրծէ իր զաւակները : Անիկա պատիմ մը
չէ, որուն տակ յանցաւոր սիրտը հազարաւոր վախերով
գալարի՝ այլ փորձի մէկ միջոցը, պատրաստուած Մէկէ
մը, որ բարեբաղդարար մեզմէ լաւ գիտէ մեզի պէտք
եղածը : Ուրեմն կսկսինք հասկնալ մէ մեզի հանդիպած
բոլոր նեղութիւնն երուն նպատակն է մեզ միմիայն երկ-
նից Թագաւորութեանը համար կրթել ու մեր բոլոր ներ-
քին անմաքրութենէն մաքրել, որպէսզի կարենանք Աս-
տուծոյ զաւակներուն փառաւոր ազատութեանը հասնիլ :

Անիկա զմեզ կը փորձէ ինչպէս որ արծաթը կը
փորձուի : Այս պատկերը կը ցուցնէ մեզ մէ Աստուծոյ
մեզի զրկած նեղութիւնները միմիայն մեր արտաքին
մարդուն համար չեն : Յաճախ կը հանդիպինք քրիստոնե-
աներու որոնք կը խորհին մէ հշմարիտ աստուածավա-
խութիւնը աշխարհային բարեկեցութեան դուռ մըն է. կը
կարծեն մէ մարդիկ դարձի գալով՝ կեանքի ամէն նեղու-
թենէ ազատած կ'ըլլան, ու հաւատացեալները ուրիշներէ
աւելի քիչ պայքար ունին :

Ի՞նչ մեծ սխալ :

Իրաւ որ անօգուտ է հանգիստ վայելելու. նպատա-
կով քրիստոնեայ ըլլալ : Քանի մը քաղցր ու տկար դեղեր
բաւական չեն մեզ բժշկելու. մեր մէջ այնքան խոր ար-
մատներ արծակած հիւանդութենէն : Դաւազանի տկ
հարուած մը բաւական չէ մեզի հնազանդութիւն սո րվ
ցրնելու : Արծաթագործին սալին վրայ կեցած արծաթ

համաձայնի մը կը նմանինք մենք եւ ոչ թէ ազնիւ մետաղէ պատրաստուած արուեստական առարկաներու, որոնք փառաւոր սելաններու վրայ կը դրուին ու պատահաբար քիչ մը կը փոշոտին կամ կ'աղօտանան, սակայն վայրկեան մը շփուելէ վերջ կը վերստանան իրենց փայլը եւ մարդուն պատկերը կ'արտացոլան : Մենք կը նմանինք արծաթի համաձայնի մը. քառս մը կը ներկայացնենք, որուն մէջ ազնիւ ու անազնիւ մետաղները այնքան միացած են իրարու, որ միայն ճանցող աչք մը կարող է անոր արժէքը հասկնալ : Այս համաձոն զտուելու է : Սակայն ի՞նչ պէս խարոցեղով, յղկելով, ձեռնելով թէ կռանելով... Միմիայն հալցին մէջ ձգուելով : Բաւական չէ նաեւ որ հալցին տակ տկար կրակ մը միայն վառուի : Անկա ջերմութեան կը կարօտի, սոսկալի եւ կիզիչ ջերմութեան : Զերմութիւնը հարիւրաւոր աստիճաններու հասնելէ վերջն է որ մետաղը հեղուկի կը վերածուի, այն վիճակին որ կարելի կ'ըլլայ կղկղանքը ազնիւ մետաղէն զատել :

Ով քրիստոնեայ, մի՛ կարծեր թէ պզտիկ դժուարութիւններով ու քիչ մը յռահալարութիւնով միայն պիտի հասնիս քու նպատակիդ : Մի՛ խորհիր թէ մի քանի արտաքին փորձութիւններ միայն բաւական պիտի ըլլան քեզ երկինքի թագաւորութեան արժանի ընելու : Կրակի մէջ նետուելու ստիպուած ըլլալուդ համար մի՛ վիատիր : Մի՛ վիատիր, երբ նոյն ինքն քու Աստուածդ, քու սեփական Աստուածդ, քեզ կրակին յանձնէ : Մի՛ վիատիր, երբ Աստուած փորձութեանդ կրակը այն աստիճանին հասցնէ որ խորհիս թէ այլեւս պիտի սպառիս անկէ : Մեղքը չէ թէ քու վրադ՝ այլ քու էութեանդ մէջն է. քու էութեանդ խորքերը կը գտնուի անօրէնութիւնը : Մեղքը փորձութեան կրակին մէջ հալուելով դուրս գալու է : Քու ամբողջ էութիւնդ այնպէս հալելու է տաքութեան ազդեցութեան տակ որ՝ կարող ըլլաս զատուիլ այն անմաքոր կղկղանքներէն որ պինդ փակած են քեզի : Հալուելու եւ, սակայն ոչ թէ սպառելու :

Ինչպէս որ արծաթը կը փորձուի : Խորհելու չենք նաեւ թէ մէկ փորձութիւնը բաւական է մեզի : Արծաթագործը կղկղալից հանածոն մէկ անգամ միայն հալցին մէջ նետելով չի հասնիր իր նպատակին : Կրկին եւ կրկին ձեռք առնելու է զայն : Արդէն հեղուկի վերածուած մետաղը՝ աւելի զօրաւոր ջերմութեան յանձնելու համար քուրայէ քուրայ փոխադրելու է զայն : Այս է զանիկա զտելու միակ միջոցը :

Ուրեմն կը զարմանա՞նք մենք երբոր մեր կեանքին մէջ գործեր ու յռահալարութիւններ իրարու կը յաջորդեն : Արդեօք յիմարարար կը փափաքի՞նք որ Աստուած մեր կեանքին մէջէն վերցնէ խաբը, առանց խորհելու. թէ ասով պիտի զրկուինք նաեւ Անոր ողորմութենէն : Պայքարէ պայքար առաջնորդուելով միայն կարող կ'ըլլանք աւելի ծանր խաբեր կրել ու աւելի մեծ շնորհներու մասնակից ըլլալ :

Արծաթը կը փորձուի :

Անկա աննպատակ չարքարանք մը չէ, այլ զտում, զտում, զտում : Ահա Աստուծոյ իր զաւակներուն ղըրկած ամէն մէկ տագնապի վսեմ նպատակը : Խաբին

տակ կը սորվինք մենք սովորականէն աւելի ջերմեւան դօրէն աղօթել, աւելի խորունկ խորհիլ, աւելի սրտանց զգալ եւ աւելի հաստատօրէն հաւատալ : Հոգին աւելի կը լրջանայ : Խաբը հետզհետէ աւելի կը սորվեցնէ մեզ տեսնել յաւիտենականութիւնը այս ժամանակիս մէջ եւ այս ժամանակս յաւիտենականութեան մէջ :

Նեղութիւնը մեզ կը խոնարհեցնէ : Ինչպէս որ Տանթէի քաւարանին մէջ՝ արդէն դարձի եկած, տակայն հպարտ հոգիները ստիպուած էին ծանր բեռան մը տակ կորաքանակ մաքրութեան լեռն ի վեր բարձրանալ, նոյն պէս ալ Աստուած մեզ բարձրացնելու համար՝ նախ կը խոնարհեցնէ : Այսպիսի պարագայի մը տակ կը ցնցուի մեր ունայն անձնավտահութիւնը : Նեղութեան մէջ զմեզ ա՛լ աւելի կախեալ կ'զգանք Աստուծմէ, կենդանի կերպով կ'ըմբռնենք մեր անարժանութիւնը եւ մեր մէջ փափաք կ'արթննայ ամէն աշխարհային նեցուկէ երես դարձնելու ու միայն Աստուծոյ յաւիտենական սիրոյ բազուկներուն մէջ նետուելու :

Նեղութիւնը նաեւ կ'սպաննէ անձնասիրութիւնը, սիրոյ ու հաւատքի այս վտանգաւոր թշնամին : Աշխարհի վրայ ամենէն բարեկեցիկ կեանք վարողներն են որ ամենէն շատ անձնասէր են : Ամենէն շատ օգնելու պատրաստ եղողները անոնք են, որ ամենէն յաճախ անօգնական գտնուած են : Ո՞վ կարող է այնքան փափկօրէն կարեկցիլ, որքան այն՝ որ շատ յացած եւ շատ մխիթարութիւն գտած է :

Ինչպէս որ արծաթը կը փորձուի :

Եթէ հալցին մէջի արծաթը հառաչելու կարողութիւն ունենար, անշուշտ պիտի հառաչէր : Եթէ հալցին մէջի արծաթը իր գոհունակութիւնը յայտնելու կարողութիւն ունենար, իր շնորհակալութիւնն ալ պիտի յայտնէր այն սոսկալի տաքութեան մասնուելու արստութեանը համար : Երանի՛ թէ մեր նեղութեան բորբոքին մէջէն ալ շնորհակալութեան ձայները չկորելին : Եթէ միայն յիշենք թէ Յիսուսի հետ նեղութիւն կրելով՝ Անոր հետ պիտի փառաւորուինք ալ, մեր երախտագիտութեան ձայները չեն դադրիր : Սակայն նեղութիւնը չկրնար զրտաիջ ազդեցութիւն ունենալ ա մէն մարդու վրայ : Կան հոգիներ որ կը դառնան անոր ազդեցութեան տակ եւ կ'ապստամբին Աստուծոյ դէմ : Կան սիրտեր որ նեղութեան միջոցով յռահատութեան եւ անհաւատութեան ցանցերու մէջ կ'իյնան :

Ենթադրենք թէ արծաթապատ պղնձեայ դրամ մը ունենաւ : Անոր վրայ թէ պատկեր եւ թէ կնիք կը գրուէին. մարդ չգիտնար խաբուած ըլլալդ, սակայն վա՛յ այդ դրամին, երբոր ան հալցին մէջ ձգուի : Կրակը չէ որ զայն պղինձի կը վերածէ, այլ կրակը կը յայտնէ միայն պղինձին պղինձ ըլլալը :

Ուստի չփախցինք կրակի փորձէն : Երախտագիտութեամբ ընդունինք զայն Աստուծոյ ձեռքէն, քանի որ այս է զտման միակ միջոցը :

Չէ թէ արծաթի հանածոն՝ այլ արծաթը գործածող արուեստագէտն է որ կ'որոշէ թէ հալցին տակի կրակը ի՞նչ աստիճանի հասնելու է կամ թէ արծաթը ի՞նչ զրտ.

տիչ գործողութիւններէ՝ անցնելու. Է զտման փափաքելի աստիճանին հասնելու. համար : Մեր երկնաւոր հօր նշա-
նաբանն է «Իր սիրածը խրատել», մեր ազգայանին
նպատակն է «Ամէն մէկ ճիւղ որ պտուղ կը բերէ» մաք-
րել, որ աւելի պտուղ բերէ» :

Երանի անոր որ փորձաւու. կ'ըլլայ այս մաքրագոր-
ծութեան : Երանելի ենք երբոր այս մաքրարար դանակը
մեզի ալ կը մօտենայ, քանզի ասիկա նշան մըն է թէ
մենք պտղատու. ճիւղեր ենք, որոնք մաքրուելով ա'լ
աւելի պտղատու. կրնան ըլլալ : Երանելի ենք, երբոր կը
թուլատրենք Աստուծոյ մեզ հնոցի ջերմութեան մատնելու,
քանզի Անոր այս զտտելու փորձը կը ցոյցնէ թէ Ան մեր
մէջ գուտ արծաթի մանիկ մը կը տեսնէ : Մենք կ'զգանք
կրակին սոսկալի ջերմութիւնը, սակայն հալոցին մէջ
կ'զգանք նստել. Աստուծոյ սիրոյն ջերմութիւնը : Չուսափա-
տինք, փորձութեան բոլորքը աննպատակ բան մը չէ եւ
Տէրը պիտի չդադրեցնէ իր զտման գործողութիւնը,
մինչեւ որ իր անարատ ու անբիծ փառքը իրեններուն
մէջ ցրուցած տեսնէ :

Թորգմ. Գերմաներէնէ

Ն. Մ.

ԵՐԲ ՅԻՍՈՒՍ Կ'ԱՆՑՆԻ

©

Քսան տարեկան էր : Իր ցաւատանջ կարծրացած
դէմքէն ստորիկութիւնը ասպարէզ կը կարդար : Չայն
գաղտնապէս ինի մատնանշած էին իբրեւ փափուկ պա-
լուկայ մը : Կատկածոտ նկարագիր մը, անմատչելի հոգի
մը :

«25^օ որ» կ'ըսէին ինձ «Ինք պիտի է ազատախօսէրու
Լիօնի շրջանակին մէջ, ուր անցուցած էր իր կեանքը» :

Եւ ես ծնրադիր ինդերեցի Աստուծոմէ որ պատրաս-
տէր զիս իմ տաւիք ալցելութիւններու եւ տար ինձ
խօսքեր օգտակարապէս գործածելու :

Ս. Գրեքս սրտիս վրայ սեղմելով, անցայ անշուք
ամառանոցին վանդակապատ դռնէն ուր Հ. Վ. եկած էր
տառապանքներուն դարման փնտռելու : Դեռ երէկ մա-
ռախապատ խիստ կ'ըլլայով մեծ քաղաքին Լիօնի մէջ
կը հիւծէր իր անկողնին վրայ, իսկ այսօր Côté d'Azurի
գարնանային բոյրերու եւ անոյշ օդին տակ . . . :

Փորձեց հիւրնկալ ժպիտ մը խառնել իր բարի
եկարի խօսքերուն մէջ :

Ու ես ալ չէի կրնար յայտնել այն սուրբ գուրդը
որ կ'զգայի զինքը կրծող սարսափելի հիւանդութեան
աւերներուն առջեւ : Եւ սակայն փորձեցի . . . :

Կարճ շնչառութիւն մը . . . տկար եւ ցաւառիթ
բառեր. խորունկ, սուր նայուածք մը սրուն վրայ թար-
թիչները կը շարժէին թռչնոց յոգնած թեւերու նման . . . :

Այս առաջին հանդիպումը, զարմանք եւ տեսակ մը հա-
ճոյք պատճառեց իրեն :

Հրավառ սիրալիւր քանի մը խօսքերէն վերջ, զորս
իրեն խօսած էի, սրտաբուզիս աղօթք մը արտասանեցի :

Իրմէ հրաժեշտ առնելու պահուս կը մտածէի
«Ո՛վ Յիսուս եթէ կարենայիր իր քովէն անցնիլ եւ
խօսիլ իրեն : Մեղմ ժպիտ մը կը սաչէր իր ցաւատանջ
դէմքին վրայէն. վերջին ակնարկ մը, եւ դուռը կը գո-
ցէի գաղտնիքի մը վրայ . . . :

Յաջորդ օրը կ'զգայի թէ ինծի կ'սպասէր եւ թէ
Աստուծոմ կ'սկսէր աղօթքներու պատասխանը տալ : Խօ-
սակցութեան պահուն երկրորդական նիւթեր անկատ թո-
ղելով՝ երկար նայուածքով զիս կը դիտէր եւ վշտաշար-
չար կարճ նախադասութիւններու մէջէն միշտ կը
փնտռէր բանաձեւ մը, մատնելու իր մէջ մատաւանջուող
եւ հարցումներով լի հոգին :

«Ի՞նչ է այդ մոլթ կողքով գիրքը որ միշտ կը
կրէք» : Հարցուց յանկարծ :

Սուրբ Գրքը արտասխտանցի եւ սիրոյ, ու քրիս-
տոնէական համոզումով աւելցուն քանի մը բառով
իրեն տուել պարզ եւ կենդանի բացատրութիւն մը :
Յետոյ կարճ վիճաբանութիւն մը տեղի ունեցաւ : Սա-
տանան խելայիդ անհաւատութեան նետեր, կ'արձակէր,
որ սակայն չէր կրնար գոհացնել կարիվեր խոցեալ եւ
տառապած հոգի մը :

Հազիւ ոտքի կ'ելլէի, «կ'ուզէ՞ք ինծի քանի մը
խօսք կարդալ այդ գրքէն» : Ըսաւ ցաւազին ձիգով մը :
Եւ ոտքի վրայ, յամբօքէն կարդացի միթառութեան
եւ յոյսի խօսքեր զորս Աստուծային Ուսուցիչը ար-
տասանած էր Պաղեստինի երկնքին տակ . . . :

Երիտասարդ բարեկամս դարձեալ թողուցի այդ
խնկուէտ միթնոլորտին մէջ : Սակայն ինծի աւելի
մօտեցած կ'զգայի զայն, մանաւանդ Աստուծոյ աւելի
մօտ :

Ու երբորդ օրը, ազատախօսներու նախկին պետը,
երիտասարդ հակասող, լուսաւորուած նոր լոյսերով՝ որ
Անկէ ցուցած էին զիս ընդունեց, աւելի ժպտադէմ,
հոգւոյս աւելի մօտեցած : Իր մայրն իսկ, որ գիտէր
թէ դժիմ մահը իր զաւկին ճակտին վրայ կնիքը
դրօշմած էր, նախորդ օրերէ աւելի ուրախութեամբ
ողջունեց զիս :

Եւ այդ իրիկուն, կարճ խօսքերով, թափանցիկ
բառերով, որ կեանքի պայքարէն դառնապէս վիրաւոր-
ները միայն կը գործածէին, Հ. Վ. ըսաւ ձեռքէս բըւ-
նելով. «Հիմա հաճեցէք աղօթել» : Սիրտս զօրացած եւ
խանդաղատանքով լեցուն, իր աղերսը բարձրացուցի
Աստուծոյ, խռովեալ եւ նուաղուն հոգին տանելով
Գողգոթայի Գոթին : Խնդրեցի Տէրոջմէ յայտնուիլ
այս չարքարուող խղճին : Իմ ձեռքս, կարծես սեղմի-
րանի մը մէջ դրուած ըլլար :

Լիւրն արցունքները կը հոսէին իր վտիտ ալոյսերէն
եւ յամբօքէն, տկար շնչիւնով մը շնորհակալութեան
մեծ բառը հոգւոյս հասաւ :

Բայց յաջորդ օրը, այդ յաղթութեան օրը, որ երբեք չպիտի մոռնամ, մեզ կը պահէր աւելի մեծ ու բախումները :

Հիւանդին խօսակցութեան եղանակը բաւարարին փոխառած կերպեր : Ս. Գիրքը մինչեւ վերջը բաց մնաց, բոլոր խորհուրդները, երկնային շաւղներէ կերթային. աղնարկները, յաւիտենական կեանքի նշոյլներ կ'արտացոլային : Ա՛հ, երբ Յիսուս կ'անցնէ . . . Ի՛նչ փոփոխութիւն, ի՛նչ զօրութիւն : Եւ Յիսուս կ'անցնէ . . . Հիւանդին ձեռքը ձեռքի մէջ, իր անկողնին առջեւ ծնրադիր կ'աղօթէի : Յաճախ կը լսէի հեծկետութիւն մը ըստած, «Այո՛, Աստուած իմ», յետոյ ինք աղօթեց : Ո՛հ, ի՛նչ աղօթք : Աղօթքը մարդու մը՝ որ մինչեւ ցարդ աղօթած չէր բնաւ. որուն Աստուած կը յայտնուի եւ որուն Յիսուս կը բերէ ներս : Եւ փրկութիւն : Հեծեծուն աղօթք մը վշտակից բայց յաղթական վանկերով, յաղթական հաւատքի, լման նուիրման աղօթք մը : Հանդիսաւոր ապաշխարութեան աղօթք մը սրտաշարժ եւ հանդարտութեամբ, այժմ հաւատացող այդ հակաաղին, որ կը յանձնուի իր քովէն անցնող Յիսուսի, իր Քրիստոսին . . . :

Ո՛հ, Հ. Վ. կրտսեր եղբայրս, ես երբեք չպիտի մոռնամ ոչ քու այս վերստին ծննդեանդ ժամը, ոչ ալ սիրելի մօրդ ուրախութեան եւ սիրոյ արցունքները :

Հիւանդութիւնը աւելի կառաւարդութիւն կը յարձակէր իր անզօր մարմնին վրայ : Քանի մը օր վերջը մեր քաղաքին «Աւետարանական ապաստանարանը» փոխադրուեցաւ : Իմ ամէնօրեայ այցելութիւններս հետզհետէ կը կարճնային, հիւանդին յարաճուն ցաւերուն պատճառաւ : Բայց ի՛նչ նախաձեռնութիւն, ի՛նչ իտաղաղութիւն : Հիւանդապահները, տնօրէնութիւնը շատ յուզուած էին, եւ մեր բոլորին աղօթքները քստամեային տնւեր պայքարներուն համար վեր կը բարձրանային, մտաուցանելով զայն հոգիներու Տէրոջ :

Վերջին այցելութեանն օրը հասաւ : Իր մահուան օրն էր այդ : Մօրը հետ անկողնին վրայ հոկած, անգիտակից հիւանդին արտայայտութիւնէ զուրկ դէմքը կը դիտէինք : Աղօթեցի եւ իր պաղ ձեռքը բռնելով հրաժեշտի եւ ցոխութեան գարովալիք ողջերթներ ըսի : «Բարեկամս, Տէրը հոս է, քեզի շատ մօտ է, Ինք քեզի հետ է, քու վրայ կը հոկէ» :

Իր դէմքը անպիտոս կը մնար եւ ես կը խորհէի թէ այս խօսքերս արդէն շատ ուշ ըստած էին. բայց ո՛չ. Աստուած ուզած էր զանոնք գործածել իր մեռնելու վայրկեանին. փորձեց քիչ մը շուղել եւ մայրիկը գրկելով, անոր ականջին կը մօրնջէր :

Օ՛հ Մայրեկս . . . Իրա՛ւ է, Տէրը . . . հոս է . . . Ահ . . . ինձի . . . մօտ է . . . Ինձի . . . հետ է . . . դիմ . . . կը . . . պահէ . . . Եւ իշխումը իր բարձին վրայ, Հ. Վ. անշնչացաւ, իր դիմագիծերուն վրայ իտաղաղութեան անշնջելի ժպիտ մը թողելով :

Ո՛հ . . . երբ Յիսուս կ'անցնէ . . . :

Թրգմ. Le Relevement

Ձ. Բ. ՊՈՒՏԱՔԱՆ

ՄԱՏՐՆԻԶՄ (MODERNISM)

Շէյթան գատիմտէն պէրու չօգ մասքէլէր ալթընտա պէշէրիյէթի, հաթթա միւմիւնլէրի ալտաթմաղա չալըշմըշ տըր : Էվվէլա Մատիյունլուգ սօնկրա ինթիգատը ալի (higher criticism) վէ օնլարըն սախթէ վէ սաթհի օլան պօյալարը աղըղա չըզընճա, շիմտի տէ մատէնիլգմ իսմի ալթընտա սատէտիլլէրէ իշի զէհիր իլէ տօլու պիր թագըմ եիւզիւ շէքէրի հէպլէր եութտուրմաղա չալըշմըշ :

Մատըրնիզմ սէօզիւ էփէյի ճալիպ վէ գուլաղա մանթըգի կէլէն պիր սէօզ տիր. Շէյթանըն «նուր մէլէյի» կիպի կէօրիւնէպիլմէսի օնուն հագիգաթէնտէ էօյլէ օլմասընա պիր պուրհան օլամաղ : Փուտրա եախօտ պօյա չալմագըղ սալթ գատընլարա մախսուս պիր ուսուլ կէօրիւնմէյօր օնա էրքէքլէր, հաթթա պիր թագըմ սախթէ մուալլիմ վէ վաըզար տախի միւպթէլա կէօրիւնիյօլլար. պումատտէ հագըզնտա չօգ կէնիշ պահս էտիլէպիլիւր իսէտէ տահա զիյատէ միւնասիպ տիր քի էլ ան 82 եաշընտա օլուպ 60 սէնէ գատար միւպէշիր վէ չօպանլըգտա փէք մուվաֆֆագիյէթլէ իշլէմիշ, քիթապլար վէ զագէթալար նէշը էթմիշ վէ տաիմա հագիգաթըն փէհիլվանը օլմուշ պիր զաթըն (Rev. L. W. Munhall D. D. Philadelphia, Pa.) պու տաիլէտէ ուզուն միւթէլաասընըն միւնմէլի թագտիմ օլունարաղ մէգըլըր մատէնիլգմ հագըզնտա ումունմա տօղըրու վէ պէրրաղ պիր թէսապվուր վէրիլին : Միւմաիլէյը մէօհիթէրէմ չօպան վէ իլմի իլահիյաթ տօգթօրու Վէր. Մընհօլ շէօյլէ եագըրյօր :

«Մատըրնիզմ պիր սախթէքեարըղ տըր», «Մատըրնիզմ տիւնեայա նէ՞ խայր էթմիշ տիր. օնուն ինթիյաճըն տէֆ էթմէյէ հիշ պիր շէյ էթմէմիշ տիր. կիւնահըն եափմըշ օլտուղու խարապէլէր իւշիւն հիշ պիր իլաճը՝ օնուն մէյտանա կէթիրտիյի հասլէթ վէ բահաթսըղլըգ իւշիւն հիշ պիր սէլամէթի՝ օնուն փարէլէմիշ օլտուղու գալպլէրէ հիշ պիր պալասանը վէ օնուն հասըլ էթտիյի իւմիւտսիւզլիյէ հիշ պիր նէճաթ չարէսի եօգ տըր : Մատըրնիզմ՝ իմանըն էլգէմ օլտուղու եէրտէ շիւփիէ հասըլ էտիպ Ալլահըն Բէլամընա մէյտան օգույարաղ անըն նուֆուգ վէ միւլէլիֆլէրինի ինքեար էտէր. խիլգաթըն աճայիպ նագլիյէթինի հիճվէ վէ թէքըիպէ չալըշմըշ, օնուն եէրինէ աւտէմլէրին խայալ վէ թէ սա վ վ ու ըւ ըւ ըւ ըւ թագ-

տիմ էտէր: Մատրնիզմ՝ Սինա տաղընը կիւրիւթիւլէրինէ կիւլէր, Ալլահըն փէյղամպէրլէրինին ըիւլալարընը իսթիհգա էտէր, մէլէքլէրին նաղմէսինին եէրինէ տավուլ գուրնա գօր վէ ճիհանըն խալիգինի (Յիսուսու) պիր գարընըն զայրի շէրի էվլատը եափար. Ալլահըն պիրիճիք օղլունուն տէօքմիւլ օլտուղու շու քէֆալէթ գանընտան հայաթ վէ սէլամէթ պախշ էյլէյէն գուվվէթ վէ լիյապաթընը սօյար: Մատրնիզմ իտտիա էտէր քի Արեմաթիալը Յովսէփին մէգարընա վուրուլան մէօհիւր հալա աշըլմամըշ (Քրիստոս գըլուլմ էթմէմիշ):

Օ՝ (մատրնիզմ) եէնի Երուսաղէմին ինճու գափուլարընը քիլիթլէմիշ վէ տիպսիզ չուգուրու (ճէհէնէմի) շիւփհէլէր վէ սունի արգուլարլէ պէր թարաֆ էտիպ պէօյլէճէ կիւնահեարըն միւսթահագ օլտուղու էպէտի ագապտան գուրթուլմագ չարէլէրինի պուլմաղա չալըշմըշ. (ճէհէնէթի վէ ճէհէնէմի ինքեար էթմիշ) օնուն ֆէլսէֆէսի տիւնեանըն ֆէսատ վէ ըահաթսըղըղընա միւնասիպ պիր տէվա պուլամամըշ, քիլիսէտէ ֆըրգալար հասըլ էտիպ օնու քէնտի հիւսնիւնտէն սօյմուշ, հէմ քէնտի գուվվէթ վէ թէէսիրինտէն մահրուլմ էթմիշ տիր, հիւքիւմէթլէրին տավալարընը հալլ էտէճէք եէրտէ կիւլիւքլէրինի արթըրըպ խուսուլմէթլէրինի չօղալթմըշ տըր, շէօյլէ քի մատրնիզմ՝ իսէլասքեարըմը գ Յիսուսուն տիւնի իլէ թապան թապանա գըտ օլուպ պիլա շիւփհէ շէյթանի տիր» «The Bible Champion, Reading, Pa. U. S. A.» *

Իսքէնտէրլիյէ

Վեր. Ս. ՄԵԼԳՈՆԵԱՆ

ՀԻՉ ՍԷՆԻՆ ԻՄՄԻՆՏԷ Օ ՊԷՕՅԻԻՔ

ՔԻԹԱՊԱ ԵԱԶԸԼՏԸ ՄԸ՞

Տարէլֆինունտա շայիրտ իքէն, թէքմիլ տինսիզ տէյու թանրաղըմ պիր մէքթէպ արգատաշըմը, պէօյիւք պիր զատը վէ հագիգի պիր խրիսթիյան հալընտա կէօրմէք ֆուրսաթ վէ մէսէրլէթինէ նաիլ օլտուլմ: Անըն թէվպէսինէ բուհանի իշճի, եա տա պիր փրէֆէսօր տէյիլ, իլա քիւշիւք պիր չօճուգ վասըթա

(*) Քեաշքի հէր պիր Քրիսթիյան իշճի պու ալլըգ օլան զաղէթատան ալուս, ֆիյաթը 2 Տալէր 35 տիր:

Ս. Մ.

օլմուշ իտի: Պու վագըայը քէնտիսի շախսէն պանա շէօյլէ նազլ էթտի:

«Պիլիթսինիզ քի պէն կէնճ իքէն թէքմիլ տինսիզ իտիմ, միւմինէ վալիտէմին պէնիմ իշիւն էթտիյի տուալար նէթիճէսիզ գալմըշ կէօրիւնիւյօր իտի: Ալլահ՝ պէնիմ իշիւն պօշ պիր խայալիտի: Յիսուսու քէնտի թալիմաթը ուղրունա շէհիտ օլան ֆագիլիլթլի վէ հիքմէթլի պիր ատէմ տէյու գապուլ էտէր իտիմ: Քիթապը Մուգատտէսին ճէհէնէթ վէ ճէհէնէմի հագգընտա սէօյլէտիյի շէյլէր պէնիմ իշիւն անճագ խայալի ըէսմէրտէն, իպարէթ իտի: Պու ճիւմէյէ ըաղմէն ֆամիլեա թէշքիլ էթտիյիմտէ չօճուգլարըմը խրիսթիյան մէպտէսինտէ թալիմ էթտիմ: Պիր չօճուգ քիւշիւքլիւքտէն Ալլահսըգ պէօյիւլէճէք օլուր իսէ, ախլագի հայաթը իշիւն փէք զիյան շէյ օլաճաղը պէնճէ մուայլէն իտի: Պէն եէթէր գատար կէնճլէր կէօրմիւշ իտիմ քի գալպլէրինտէն Ալլահ գօրգուսու գալտըրըլտըգտան սօնրա անլէր կիւնահըն էլինտէ անճագ պիր օյունճագ օլմուշ իտիլէր»:

«Պիր ազշամ գարըմ պանա տէտի քի. «Պիրիմ քիւշիւք Շարլ պու կիւն չօգ իթաաթսըգ օլտուլ»: Պէն չօճուղու էյիճէ թագիր էտիպ տարըն պիր չէհրէ իլէ ալըլտըմ: Եաթաղա կէօթիւրիւտիւքտէ պիր ազ վագթ սիւքիւթճէ եաթար, լաքին պիրտէն եիւքսէք սէսլէ հընճղըրարագ աղլամաղա պաշլատը: Եանընա կիթտիմ, նիշիւն աղլատըղընը սիվալ էթտիմ, էվվէլա սայքի ճէվապ վէրէմէտի, սօնրա աղլալարագ «ա՛խ պապա, մէլէքլէր» տէտի: Պէն թէաճիւպ էտէրէք «նէ մէլէքլէրի» տէտիմ: «Մէլէքլէր պունու եաղտըլար — Ալլահ պապանըն քիթապընա» Օղլան հընչըրմասընտան արթըգ սէօյլէյէմէտի. — Էլպէթտէ եաղտըլար, իշթէ մամայա իթաաթսըգ օլուրսան պէօյլէ օլուր տէտիմ»: Կէօղլէրինտէն ըրմագ կիպի եաշլար տէօքէրէք, գօրգու վէ հէյէճանլու «աման պապա պու արթըգ քիթապտան պօգուլմագ մը»:

«Չօճուղուն շու հալընա չօգ աճընտըմ, մէլէքլէրին մէվճուտիլէթինէ հէր նէ գատար ինանճագ իտիմ իսէտէ, անըն սիվալընա ճէվապ վէրմէյէ մէճպուր օլտուլմ, իմտի անա էվվէթ Շարլ պու քէօթիւ իթաաթսըգլըղլարըն քիթապտան թէքրար սիլինէպիլի, սէն անճագ Ալլահ պապատան ըէճա էթմէլիսին քի Օ սանա աֆվ էթսին: Օղլան եաթաղընըն իշիւնտէ չապուճագ գալգարագ, «ա՛խ պապա

պէն պունու եափաճաղում, պէլքի տիղ չէօք-
սէմ տահա էյի օլուր, տէյիլ մի» էվվէթ օղլում
տիղ չէօք: Շարլ կէօղլէրի փարլայարագ, պիր
սըչրամատա եաթաղընտան էնտի վէ պիր աղ
տիւշիւնտիւքտէն սօնրա, «պապա սէնտէ պէ-
նիմլէ պիրլիքտէ տիղ չէօքսէն պէլքի Ալլահ
պապա տահա զիյատէ եափար» — պէնիմ շաշ-
գըն պիր հալա կէլմէմին նէ մանասը վար
իտի: Պու հիչ եափամարշ օլտուղում պիր շէյ
իտի վէ պիւթիւն տիւնեայը պանա վէրսէլէր
իտի, պանա հէմէֆքեար օլան տօսթլարըմըն
պիրինին պէնի պու հալտէ կէօրմէսինէ ասլա
րազի օլմայաճագ իտիմ, լաքին պէն շիմտի
սահիհէն օղլումուն եանընա տիղ չէօքտիւմ:
«Ա'ի պապա, շիմտի սէն' պէնիմ իշիւն տուա
էթ, սէն Ալլահ պապայա հէր շէյի տահա էյի
սէօյլէյէպիրիւրսին»: Իմտիպէն տուա էթտիմ.
լաքին աճաիպ պիր թէէսիր ալթընտա, — տէր-
ունիմտէ ասլա թարիֆ օլունմայան պիր հալ
վուզու պուլտու — ամէն տէտիքտէն սօնրա,
Շարլ պէնի սարսան պիր թէմքինլէ «պապա
պէօյիւք քիթապտա պէնիմ հազըմտա եազը-
լան մութլաքա սիրինտի մի» — էվվէթ օղլում
մութլաքա, — պիր աղ սօնրա եինէ տէվամ է-
տիպ «մէլէլէր օնու նէ' իլէ սիլտիլէր, պիր
սիւնկէր իլէ մի» — իսայր չօճուղում սիւնկէր
իլէ տէյիլ, Յիսուս պիղիմ իշիւն էօլտիւ վէ
անըն գանը պիղի հէր կիւնահտան փաքլէր.
Շարլ ուզուն պիր սիւքիւնէթէ տալտըգտան
սօնրա, տահա եաշլար իլէ տօլու օլան կէօղլէ-
րինի վազարը պիր թարգտա պանա չէվիրէ-
րէք տէտի, «Պապա, հիչ սէնին իսմին տէ օ
քիթապա եազըլտը' մը». — Եազըք քի էվվէթ.
«Մամանընքի' տէ մի, օ' տա մը կիւնահ իշլէ-
տի». էվվէթ. «Ամմա սիղին կիւնահլարընըգ
սիրինտի, էօյլէ տէյիլ մի»: Չօճուղուն պու
իմթիհանընըն էօնիւնտէ պէնի գօրգու վէ տէհ-
շէթ սարտը, պանա էօյլէ կէլտի քի պիր չօ-
ճուգ էօնիւնտէ տէյիլ, իլա կէօղլէրի աթէշ
ալէվի օլան էպէտի չաքիմին հուզուրունտա
տուրույօր իտիմ, ճէվապէն եափաշճա իւմիտ
էտէրիմ քի էվվէթ տէտիմ: Արգամտա ազըտը-
նը թուլթմաղա չալըշան պիրի օլտուղունը հիս
էթտիմ. գարըմ արգամտան կէլմիշ վէ պիւ-
թիւն գօնուշուղումուղու տինէմիշ իտի: Մէր-
գումէ ումուղումա տիւշտիւ վէ պէն քէնտինէ
տիղ չէօքտիւրտիւմ վէ պիղ (փէտէր, վալիտէ
վէ էվլատ) պիրլիքտէ' պիղ եօլունու շաշըրմըշ
օլան քիմսէլէրի Յիսուսուն գանընըն իաթըր
իշիւն գապու էտէն ինայէթլի վէ մէրհամէթլի

Ալլահա տուա էթտիք:

Պիղիմ Շարլ պիղիմ հազըմըգտա նասըլ
ինանտը իսէ, շիմտի պիղ տէ հէման էօյլէ
ինանըյօրուգ: Պէօյլէճէ վալիտէմին տուալարը
իշիտիլտի:

Թէրօմիմէ

Ե. Պ.

ԿՐՕՆՔՆԵՐՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ է տարբերութիւնը, եթէ մարդ իր
ղաւանած ո եւ է կրօնքին մէջ լաւագոյնն
ընէ:

Մեծ է տարբերութիւնը:

Քրիստոնէութիւնը ճշմարիտ է. իսկ միւս
կրօնքները սխալ, թէեւ անոնք ճշմարտու-
թեան տարրեր կրնան ունենալ իրենց մէջ:

Սուտի մը անկեղծօրէն հաւատալով սուտին
արժէքը չի փոխուիր, սուտը սուտ է: Արդա-
րեւ, մէկը որքան որ աւելի սրտովին եւ ան-
կեղծօրէն, հաւատայ սուտի մը, նոյնքան աւելի
կը վնասուի:

Շատ անկեղծօրէն կրնամ հաւատալ որ
թոյնը կերակուր է: Բայց երբ ուտեմ զայն
անմիջապէս պիտի սպաննէ զիս, հակառակ որ
հաւատամ թէ անիկա կերակուր է, ինչպէս որ
գիտէի նաեւ որ թոյն էր:

Եթէ սխալ ճամբայ մը գացող սխալ շոգե-
կառք մը առնեմ, անիկա զիս պիտի չի տանի
իմ բաղձացած տեղս, հոգ չէ՝ թէ որքան ան-
կեղծօրէն եւ լրջօրէն հաւատամ որ այդ ուղղու-
թեամբ կ'երթայ նա:

Ճշմարտութիւնն է միայն ազատ ընողը
երբ մարդիկ անոր հաւատան: Եւ սխալի մը
վրայ ունեցած ոչ մէկ խորին համոզում կըր-
նայ զիս ազատ ընել:

Յիրաւի, մէկը որքան աւելի հաւատայ
սխալի մը, այնքան աւելի պիտի գերուի անկէ:

Այսօր աշխարհի վրայ չկայ աւելի յիմար
խորհուրդ մը քան ըսել որ խնդիր չէ թէ մարդ
ինչի կը հաւատայ, բաւական է որ անկեղծ ըլ-
լայ այդ հաւատքին մէջ: Մէկը ինչ բանի որ կը
հաւատայ կը ցուցունէ իրեն ի՞նչ ըլլալը: Եթէ
սխալին կը հաւատայ, մոլորեալ մըն է, խնդիր
չէ թէ ինչքան անկեղծօրէն հաւատացած է ա-
նոր:

Խարգմ. Անգլիերէնէ

Մ. Ա.

ԱՍՏՈՒԱԾ ՍԷՐ Է

5

Աստուած սէր է, սէրը իր էութիւնն է, իր նիւթը, իր կեանքը :

Աստուած սէր է, սէրը կ'ամփոփէ իր բոլոր գործերը եւ կը բացատրէ իր բոլոր ճամբաները : Սէրը իրեն ներշնչած է սուրբ ցեղի մը ստեղծագործութիւնը, եւ ինկած ցեղի մը փրկագործութիւնը :

Սէրը յաղթած է ոչնչութեան՝ մեզի գոյութիւն տալու համար. եւ մեղքին վրայ յաղթական է մեզի յաւիտենական կեանք տալու համար :

Սէրը կը կազմէ առանձքը հրեշտակներու պաշտաման՝ եւ պիտի կազմէ նաեւ առանձքը մեր պաշտելուն յաւիտենականութեան մէջ :

Աստուծոյ խորհուրդները սէր են, Անոր կամքը սէր է : Անոր նախախնամութիւնը սէր է, Անոր տնօրինութիւնները սէր են, Անոր սրբութիւնը սէր է, Անոր դատաստանները սէր են, իր մէջ ամէն ինչ սէր է : Աստուած սէր է :

Այս բանին մէջ է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք զԱստուած, հապա որ Անիկա մեզ սիրեց ու իր որդին զրկեց մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու : Ա. Յովհ. Դ. 10 :

Թրգմ. «L'Ami de la Maison» Էն

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՏԵՄՆԷ

6

Փոքրիկ տղայ մը ամէն իրիկուն պառկելու ժամանակ հետեւեալ աղօթքը կ'ընէր իր մայրիկին հետ.

Հանգչիլ կ'երթամ ես յոգնած՝
Բռնող աչքերս ծանրացած,
Հայր իմ բարի, հսկէ դուն
Վրաս աչքովդ միշտ անքուն :

Թէ որ ըրի բան մը չար՝
Ներէ Աստուած բարերար,
Քանզի արիւնն փրկչին հօր
Կը ծածկէ մեղքեր բոլոր :

Այն օրերը որ փոքրիկը մասնաւոր անկարգութիւն մ'ըրած չէր, մայրը այս աղօթքին առաջին մասը միայն կ'աղօթէր անոր հետ, իսկ այն օրերը որ անկարգութիւն մը պատահած էր՝ երկրորդ մասն ալ կ'աղօթէին :

Իրիկուն մը, պատիկ տղան առաջին մասը աղօթելէն յետոյ՝ երբ մայրը ուղեց անոր վերջին համբոյր մը տալով ծածկել զայն՝ յանկարծ վերմակին տակէն հետեւեալ խօսքերը լսուեցան հեկեկալէն.

Թէ որ ըրի բան մը չար՝
Ներէ Աստուած բարերար.

«Տղաս», ըսաւ մայրիկը զարմանքով, «Չէ՞ որ դուն այսօր ամբողջ օրը բարի եղար եւ կէս օրէն վերջն ալ այնչափ աղուոր խաղցար փայտէ տուններ շինելով» :

«Բայց ճիշդ այդ ատենն էր որ պատահեցաւ», ըսաւ փոքրիկ յանցաւորը լալով : «Մեծ տուն մը շինած լմնցուցած էի, մէյ մըն ալ հայրիկը ներս մտաւ եւ այնչափ ամուր կոխեց գետինը որ տունս փլաւ : Ես ալ անոր բարկանալով՝ «Չար հայրիկ», ըսի : Իրաւ, կամաց ըսի եւ հայրիկը բնաւ չլսեց, բայց դուն ինծի պատմած ես թէ Աստուած ամէն բան կը տեսնէ եւ կը լսէ, Անիկա անշուշտ լսեց երբոր հայրիկիս բարկացայ, եւ քանի որ բարկանալս մեծ յանցանք մըն էր, պէտք էր որ երկրորդ համարն ալ աղօթէի» :

Թրգմ. Գերմաներէնէ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԵՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎՐ ԺԸՆԷՎԻ ՄԷՋ

Մեզմէ շատեր գիտեն թէ «Միջաղգային ընկերութիւնը Մերձաւոր Արեւելքի համար» ընկերութիւն մը կայ, որուն անդամ են այն բոլոր երկիրներու հայասէր ընկերութիւնները, որոնք պատիկ կամ մեծ համեմատութեամբ կ'օգնեն Հայերու եւ Հայաստանի : 25 այսպիսի ընկերութիւններ կը վերաբերին սոյն ընկերութեան. Ամերիկացիներ, Անգլիացիներ, Աւստրալիացիներ, Պելճիքացիներ, Տանիմարացիներ, Շուէտացիներ, Գերմանացիներ, Զուիցերիացիներ եւայլն : Այս ժողովին անդամ է նաեւ Հայ Բարեգ. Միութիւնը :

Այս ժողովին մէջ հետեւեալ կէտերը որոշուեցան.

1. Տօքթ. Նանսէնի առաջարկը, որ Ազգաժողովէն մերժուեցաւ, կրկին Ազգաժողովի առջեւ հանել յանուն սոյն միջազգային ընկերութեան եւ խնդրել անկէ մաս մը գաղթականներ. Հայաստան փոխադրելու համար այդ մէկ միլիոն ոսկիի գումարը ո եւ է կերպով հայթայթել ազգերէն, որպէս զի գաղթականներու համար հիմնական օգնութիւն մը ըլլայ:

2. Ազգաժողովը որ մի քանի տարիէ ի վեր Հաւելի մէջ հաստատութիւն մը ունի Միս քառն եւ փէի հսկողութեան տակ, կ'ուզէ այլեւս փակել: Մեր ընթերցողներուն ծանօթ է թէ սոյն հաստատութիւնը պատսպարան մըն է, ուր կ'ապաստանին թուրքերու, Արաբներու տուններէն դուրս ելած աշուր փախչող մեր հայ եղբայրներն ու քոյրերը: Ընկերութիւնը գիտնալով սոյն հաստատութեան շատ կարեւոր դերը վերոյիշեալ քաղաքին մէջ, պիտի խնդրէ Ազգաժողովէն գէթ մինչեւ 1927 ի վախճանը իրեն նպաստները շարունակել:

3. Խօսուեցաւ նաեւ Սուրբոյ մէջ գտնուած մեր եղբայրներու վիճակին մասին, ու դիտուեցաւ թէ եթէ ասոնք Հաւելի ու Պէյրութի քէմբերուն մէջ մնալու ըլլան կարճ ապագայի մը մէջ, անոնք ենթակայ պիտի ըլլան առօրեական եւ հիւանդութեան, ուստի պէտք էր մասնաւոր քանքեր թափել եւ անոնցմէ երկրագործները յարմար եւ բաղդատաբար խաղաղ հողամասերու մէջ հաստատել հողը մշակելու համար: Ընկերութիւնը, որ հետաքրքրութեամբ լսած էր Տօքթ. Պէրօնի տեղեկագիրը, որոշած է կարելին ընել իր առաջարկներու իրականացման համար:

4. Հայ որբերու օրը, — Ոսկեղէն կանոնի օրը, որոշուած է այս տարուան համար Գեկտեմբերի առաջին կիրակին: Սոյն օրը իւրաքանչիւր հայասէր հայ որբերու կերակուր ուտելով, կամ նոյն օրը ուէէ հացոյքէ մը հրաժարելով, խնայուած դրամը կը ղրկէ Հայ Գաղթականներուն համար գործածուելու:

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Թերթիս 6 էջը հայերէն է, իսկ 2 էջը հայատառ թուրքերէն լեզուով: Շատ մը փափաքողներու հետ մենք եւս ուրախ պիտի ըլլայինք, եթէ կրնայինք սոյն թերթը երկու լեզուներով ալ ծական էջ հրատարակել, սակայն այս բանին ոչ մեր պիւտնէն կը ներքէ, ոչ ալ ժամանակը: Հայաստանէն անոնք որ շատ թուրքերէն չեն գիտեր, ազգային ոգւոյն հակառակ գտնելով կը նեղուին թերթիս մէջ սոյն լեզուով գրութիւն տեսնել: Այս պատեհութեամբ պիտք խնդրէինք իրենցմէ եղբայրաբար խոնարհաբար՝ այնպիսի զգացումները զսպել եւ աւելի հաշտ աչօք նայիլ անոնց վրայ, որոնք ատե.

նօք ստիպուած էին իրենց մայրենի լեզուն ձգելու եւ ուրիշ լեզու որդեգրելու:

Միեւնոյն ատեն պիտի խնդրէինք թրքախօսներէն կարդալ ջանալու սոյն թերթին հայերէն յօդուածներն ալ եւ կ'ապահովենք զանոնք որ շարունակական յարատեւութեամբ պիտի կրնան հասկընալ ամէն ինչ: Թուրքերէն յօդուածները հայերէնի թարգմանութիւն չեն, ուստի հարկ է իւրաքանչիւր կտոր աչքէ անցնել եւ անկէ օգտուիլ:

Մեր քովը պատրաստ կան.

Ս. Գիրքեր հայերէն լեզուով ամէն մեծութեամբ հասարակ եւ ոսկեղծ:

Ս. Գիրքեր հայատառ թուրքերէն խոշորագիր եւ մանր: Հոգեւոր երգարան, ձայնագրուած եւ գրպանի հասարակ եւ ոսկեղծ:

Քրիստիանոսի ձամբորդութիւնը, հայերէն եւ հայատառ թուրքերէն:

Ս. Գրոց բառարան:

Ս. Գրոց աշակերտին գիրքը:

Նոր Կտակարանի մեկնութիւն:

Կան նաեւ ամէն տեսակ հոգեւոր գրքեր. Օր. Տիտոս, Երէջ Հէի կենսագրութիւնը, Խաչ տանող, Մտածութիւնը, Խաչ տանող, Մտածութիւնը տօնական օրերու եւայլն:

Հոգեւոր կեանքը մշակող ո եւ է գիրք ձեռ անցնել ուղղորդներուն միշտ պատրաստ ենք աջակցելու եւ սոյն գրքերը հայթայթելու:

Հարամեկան հրատարակող, քո բնաւորէն, քարտ վիզիթ, յայտագիր, թերթ, տամակ, ստացագիր, պանֆլետ, պոշիթ, գիրք, եւայլն

Մ. ԵՐԵՑԵԱՆ ՏՊԱՐԱՆ Հեռ. 84.28
40, ՐԻԻ ՏԵ ՏՈՒՆԻՔԷՆ, ՄԱՐՍԷՅԱ

ԱՅՄԵՆ, ՄԱՐՏՈՒՐ ԵՆ
ՃԱՆԱԿԱՆՈՐ
ՕՐԵՆԴՄԱՆ ԵՆԲՐՈՒ ԶՈՒ ՄԵՆԵՐԳ
ՄԻԱՅՆ ՆՈՐ ԳԻՐ ԿԸ ԳՈՐԾԱԾՈՒՄ
Յանձնարարութիւնք վուժով

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպար, երեցեան, 40, Րիւ տէ Տօմինիքէն, Մարսէյ

P. Y. Kaltenbach